

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԷԿԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ «ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆ»Ը

Նորայր Ն. Բիւզանդացին (1845-1915 զեկտ. 25) նախ եղել է Վիննետիկեան Մխիթարեան Միաբանութեան անդամ, ապա 1876ին աշխարհականացել է. որպէս քահանայ կոչուել է Հայր Յարութիւն Թերզոնցի, 1869 թ. ապրիլին ուղարկուած է Պոլիս, 1870-1872 թթ. պաշտօնավարում Բաղկեդոնի (Գատը Բէօյ) Մխիթարեան վարժարանում: Ետքը նախապես Վանքում եղած ժամանակ, ուր երկու տարի վարել է մտանադարանապետի պաշտօնը, Հ. Յ. Թերզոնցը հետաքրքրուել է հայկական միջնադարեան տաղերով: Պոլսում տաղարան հրատարակելու միտք է ունենում, ինչպէս վկայում են ստորև հրատարակուող նրա երկու նամակները և ուրիշներ. ուստի հաւաքում է տաղեր, որքան հնարուոր է. այս նպատակով դիմում է Ս. Ղազարում մնացած իր եղբայրակիցներին երկուսին: 1870 թ. օգոստոսի 19ին գրել է ոմն Հայր Սահակին. «Աղաչեմ տալ ընդօրինակել Ձարնհի Եիշմանեան կամ այլում ումեք ի մանկաւոյդ ստանաւոր մի Ամիր Մուսէ Նաղաշի, զոր գտցես ի Հայկարան Գ, էջ 997, առանց զգուշացուցանելոյ տեսչիդ թէ վասն իմ իցէ. նոյնպէս ի Հայկարան Զ, էջ 309, զպատմութիւն առմանն կ. Պոլսոյ գրեալ յԱթրակասէ Անկիւրացւոյ, դարձեալ տացես գաղափարել որ ինչ գտանի զԱռաքելէ Բաղիշեցւոյ ի Հայկարան Գ, էջ 459,

982, 1005. Հայկարան Զ, էջ 801, և Հայկարան Յիշատակարանաց, էջ 745, 811, 1052: Խնդրեմ ի սիրոյդ մատուցանել ինձ անյապող զայս ծառայութիւն: Եւ ժիւս թուղթս յանձնել ի ձեռս Հ. Վահանայ ամենայն զգուշութեամբ, զի մի՛ անկցի ի ձեռս այլոց: Ողջ լեր» (Նորայրի դիւան, Թղթ. 4:1-14, Վաւ. 4:7, էջ 30, մեր էջակալմամբ): «Միւս թուղթը» հետեւեալն է, նոյն օրը գրուած. «Պատուական եղբայր Հ. Վահան, աղաչեմ օրինութեանդ ընդօրինակել վասն իմ գտաղս Յրկան երգասացի, որոց սկիզբն է շիմ սիրա, վատին մի՛ լսել», Տղր. ԺԶ, էջ 407, և «Կ'ուզե՞ս որ ազիդ կենաս», Տղր. ԺԵ, էջ 214. դարձեալ գտաղս Յովհաննիսի Թուկուրանցւոյ՝ «Քիմսէ պէնի պիմէդ խի», Ոսկեփորիկ Գ, էջ 7. «Ըզքեզ Աստուած խոստովանիմ», գիրք ստանաւորաց, էջ 730, թիւ ձեռագրին՝ 171. Գ. գ. «Ըզքեզ ունիմ յոյս լ'ապաւէն» ի նմին ձեռագրի, էջ 733» (ն. տ.): 1870 թ. գեկտեմբերի 1ի նամակում դարձեալ Հ. Սահակից խնդրում է. «Կ'աղաչեմ որ օրինակել տուած տաղերդ առաջին առթով անմիջապէս ձեռքս հասցնես. Հ. Վահանին սիրոյդ յանձնած տաղերէն զատ, կը խնդրեմ որ աս հետեւեալներն ալ գրել տաս. 1. Յովհ. Թուկուրանցւոյ «Տող ի Լիպարիտն», Տողարան ԺԵ, 249. 2. «Տեսայ իմ հոգուս հոգին», Տողր. ԺԶ, 437. 3. «Երթայաք ու գայաք», Տողր. ԺԶ, 485. 4. «Աստուած իմ Յիսուս», Տողր. ԺԶ, 581. 5. Առաքել վարդապետի սեղանօրհնէք որ կը սկսի «Օրհնեսցուք մեք միարան», Ոսկեփորիկ Գ, 433. 6. «Իմաստնոյն կեանքն», Տողր. Զ, 189: Ասոնցմէ զատ Այիշանէն տեղեկացիր, բայց առանց ամենևին իմ անունս տալու, թէ ո՞ր տաղարանին մէջ է Յովհ. Թուկուրանցւոյն այն տաղը յորում կը պատմէ Նարեկացւոյն եփած աղանիները պահող օրով կենդանացնելու հրաշքը, և մէյմ'ալ Դաւիթ Սայաձորեցւոյն ծաղկանց տաղը ուր շատ մը ծաղիկներու անուններ կը գանուին, և ասոնք ալ ընդօրինակել աուր, բայց կ'աղաչեմ կտրին զտաղափարողի մը յանձնես և խնամով բող-

21. — էջ 272, տող 23, «որպէս շարագրեալ է ի Գիրք. սանդուխտ». — Ուզգելի՛ ի Գիրք Սանդղոց, ինչպէս ունի ձեռագիրներէն մին (էջ 374) կամ, ի Գիրք Սանդուղք (Սանդուխտ), որ գործն է Յովհաննէօ Կլիմաքոսի:

22. — էջ 304, տող 28, «յոր և երթալն էր». — Ուզգելի՛ երթալն էր, ըստ վկայութեան երկու ձեռագիրներու (էջ 387):

Ն. ԱՐԲ. ԾՈՒՎԱԿԱՆ

դատես սկզբնադիրներուն հետ օրինակու-
ուած տաղերը որպէսզի ամենայն կերպով
ապահով ըլլամ [...]: Այլիչանին բարե-
ըրէ իմ կողմանէս և շնորհակալ եղիր»
նրա նուիրած մի գրքի համար (Դիւան,
Թղթ. 4:1-14, Վաւ. 4:7, էջ 38-39):
Ստացել է խնդրած ընդօրինակութիւնները
և 1871 թ. օգոստոսի 3ին գրել է Սա-
հակին. «Ընդունեցայ խրկած տաղերդ,
սակայն կ'աղաչեմ կը պաղատեմ որ աւելի
որոշ և ընթեռնելի ըլլան գրերդ, վասն
զի շատ տեղ չկրցայ հանել. չեմ գիտեր
թէ ինչպէ՞ս պիտի կարենամ ստուգել:
Ծնորո՞տկալ ըլլալով աշխատութեանդ հա-
մար» և այլն (անդ, էջ 47):

1872-1876 (ամառ) տարիները է. Յ.
Թերզումցը, հոգով աշխարհական, հայ եր-
կու երիտասարդի որպէս դաստիարակ-
խնամակալ և ծախսարար անց է կացնում
նախ Լօզանում (մի տարի) և ապա՝ Փո-
րիզում, իսկ 1876ի աշնանից մինչև 1879ի
գարունը մնում է Փարիզում, միշտ իր
Ֆրանսերէն-հայերէն բառարանի պատ-
րաստութեամբ և «Հայկական բառակցու-
թիւն» փոքրիկ աշխատութեան շարադրը-
մամբ զբաղուած, և ժամանակ չի ունե-
նում տաղերի համար: Պոլսում այս եր-
կու աշխատութիւններից առաջինը հրա-
տարակելուց (1880 թ.) և երկրորդը Թաթ-
րան յանձնելուց և ժամուկներ տպագրել
տալուց յետոյ, 1882ի աշնանը ընդմիշտ
մեկնում է Ստոքհոլմ իր կնոջ մօտ: Այս-
տեղ է, որ իր բանասիրական և բառարա-
նագրական աշխատանքներին զուգընթաց
զարձեալ հաւաքում է տաղեր, տաղարան-
ներին ու տաղասացներին վերաբերող տե-
ղեկութիւններ, ինչպէս վկայում են նրա
դիւանի անտիպ նիւթերը: Նրա պաշտելի
կինը մահանում է 1899ի մարտի 30ին,
աշխարհը փուլ է գալիս Նորայրի գլխին:
Դարձեալ Թաթրոտ, ինչպէս էր Ս. Ղա-
զարում, տաք կլիմայի կարօտ, 1903 թ.
վերջաւորութեանը հաստատուում է վենե-
տիկում և այստեղ է, որ Ս. Ղազարի մա-
տենադարանում իրականացնում է հատ-
ընտիր տաղարան պատրաստելու վաղեմի
երազանքը, ինչպէս վկայում են նրա դի-
ւանում պահուած և ստորև մեր թուար-
կած տաղերի հարիւրաւոր էջերը, թէ՛

սեւագիր և թէ՛ մաքուր ընդօրինակու-
թեամբ, սպագրութեան պատրաստ: 1905
թ. նոյեմբերի 10ին գրում է Վիեննա,
է. Թովմաս կէտիկեանին. «Նահապետ
Քուչակի Տաղերուն նոր հրատարակու-
թեամբ կը զբաղիմ երեք ամսէ ի վեր, ի
խնդիր ուսումնասէր և բարեսէր ազգայ-
նոյ մը» (որի անունը չի տալիս): Եւ քանի
որ անձամբ չի համարձակուել դեռ վենե-
տիկեան Մխիթարեաններից օգնութիւն
խնդրել նոյնիսկ տաղերի համար, ուստի
գիմել է միջնորդութեան՝ է. Թովմաս
կէտիկեանին. «Շատ շնորհակալ եմ որ
լսեցիք աղաչանացս՝ է. Մկրտիչ Պոտու-
եանի միջնորդելով, և ի 28 Հոկտեմբերի
տարւոյս հասուցիք առ իս զընդօրինա-
կութիւնս (Նահապետի) Տաղիս» և այլն:
է. Թ. կէտիկեանից է խնդրում նաև, որ
Վիեննայի Մխիթարեան վանքի իր նշած
գրքերից կամ ձեռագրերից արտագրի և
ուղարկի իր ուզած տաղերը: Նրան ա-
ռինքնել են յատկապէս Նահապետ Քու-
չակի (կամ նրան վերագրուած) տաղերը.
«Այս անզուգական բանաստեղծիս Սիրոյ
Տաղերն ա՛յնպէս են ուրիշ նոյնպիսի Տա-
ղերու համեմատութեամբ, ինչպէս Սո-
խակի գեղգեղանքն հարիւրաւոր թուչոց
երգերուն մէջ. խաբուել անհնար է» («Նո-
րայր Ն. Բիւզանդացու նամակները Վիեն-
նայի Մխիթարեաններին», հրատ.՝ Մար-
տիրոս Մինասեան, լոյս են տեսնելու
Պէյրութում, նամակ 25):

Հայերէն միջնադարեան տաղերի մի
ուրիշ գնահատող, սիրահար և հրատարա-
կիչ եղել է է. Ն. Ակիսեանը: 1908 և 1909
թթ. Նորայրը, երբ անտանելի ցաւերով
է տառապել ու վիրահատութեան ենթար-
կուել, չի մոռացել իր սիրելի տաղերը.
խնդրել է է. Ն. Ակիսեանից, որ այս ինչ
կամ այն ինչ տաղը հրատարակի «Հանդէս
Անտոբեայում, և տպագրուածները մասին
իր գիտողութիւններն է հաղորդել նրան
(սչուած նամակներում թ. 32-36 նամակ-
ները) և խնդրել, բացի լոյս տեսածներից,
որոշ տաղերի ընդօրինակութիւնները:

Նորայր Ն. Բիւզանդացու կազմած
անտիպ «Հասրնէի» քաղաքանշն իր նման-
ներից տարբերում է բնագրերի խոր
բնականութեամբ և անհրաժեշտ օրբա-

գրութիւններով, գլխաւոր տարբերակներն ամբողջի համադրութեամբ ոչ թէ էջատակում այս կամ այն բառի դէպքում, այլ ամբողջ տողի կրկնութեամբ: Ով գրադուել է գրաբար որեւէ քննական բնագրի պատրաստութեամբ, տեղեակ է անթիւ դժուարութիւններին, որոնք ծառանում են: Արդ՝ գրաբարի քերականութիւնը և բառապաշարը քիչ թէ շատ ծանօթ են. բայց նորայրը պատրաստել է միջին կամ «ստորին» (ինչպէս գրել է) հայերէնով գրուած տաղերի զիջակուն բնագրեր, հայերէն, որի քերականական կանոնները ճշտուած ու սահմանուած չէին նրա ժամանակ, իսկ բառարանը միանգամայն անծանօթ էր: Սակայն նորայրը տարիներ առաջ պատրաստել էր միջին

հայերէնի բաղձահատոր բառարանը՝ «Բառագիրք ստորին հայերէնի» (անտիպ), որի հարստացմանը նպաստում էին, միւս կողմից, տաղերը: Ուստի կարող էք պատկերացնել, թէ գիտական ինչպիսի՞ թանկագին աշխատանք է նորայրի «Տաղարան»ը: Նորայրին անծանօթ հայերէն ձեռագրերը, որոնք բովանդակում են քուչակեան և այլ տաղերի տարբերակներ, կարող են միայն լրացնել այդ գործը, բայց ոչ նսեմացնել կամ արժէքազրկել: Ուստի աւելորդ է կոչ անել, որ նորայրի «Տաղարան»ը ուսումնասիրուի կամ լոյս ընծայուի ի պատիւ նրա յիշատակի և յօգուտ «իր ազգի», որի համար նա աշխատելիս է եղել անգողրում:



Հետևեալ անտիպ կրկու նամակները նորայրի գրչից են, երբ դեռ Ս. Ղազարի Մխիթարեան վարդապետ էր:

Նորայր Ն. Բիւզանդացիին միջնադարեան ասղերի եւ քատեռական լեզուի մասին¹

«Ազնիւ Պարոն Մանուէլ Հասյեան,

Շատ շնորհակալութեամբ ընթերցայ Քնար Հայկականը² զոր խնդրեր էի Ձեզմէ Յ. Հ. Բառնարաս Վ.ի բերնով, և ահա կը փութամ դարձնել զայն ձեռուընդի: Գրքին մէջ նշանակուած ծանօթութիւններէն իմացայ որ դուք ալ ինծի պէս սիրող էք ազգային երգոց և խաղուց, որոնք թէպէտ գրուած բաժնի լեզուով և երբեմն նաև անարուեստ տաղաշափութեամբ, պէտք չէ արհամարհուի ճշմարիտ հայ բանասիրէ մը: Ձեզ գիտեր թէ ի՞նչ աստիճանի ընդունելութիւն գտած է Ձեզմէ Միանսարեանի երգոց հաւաքածուն, որ pompeusement Քնար Հայկական կը կոչուի, բայց ըստ իս ատկէ աւելի խառնիխառն, անոճ և ցուրտ խմբագրութիւն մը չի կրնար ըլլալ, ուր քովէ քով շարուած են առանց ամենևին ընտրութեան սրբազան երգիչք և տարփաւոր բանաստեղծք, ուր փոխն ի փոխ կը լսուին հոգեբոցոց ձայները շարականներու և մեղեդիներու մէջ, և Շամլի Մելքոյի, Միսկին Քուրդիի, Գուրջի Նազէի, Քիչիկ Օղլանի և ուրիշ կովկասային ասուլներու խաղերն: Միթէ մեր յետին ժամանակաց մատենագրութեան մէջ՝ սկսեալ ԺԴ և ԺԵ դարերէն՝ չկա՞ն տաղասացք որ քաղցր լեզուով և քաղցրագոյն իմաստներով երգած չըլլան սէրը, ուրախութիւնը, պանդխտութիւնը, ժամանակակից տխուր դէպքերը: Ո՞ւր է Յովհ. Թուրքուրանցեոյ մը, Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսի մը, Եւդոկիացի Մինասի մը, Սաչիկ Երէցի մը, Սարկաւազներու, Ստեփանոսներու, Մարտիրոսներու և այլոց յիշատակումը: Ինչո՞ւ համար հրատարակիչը և ոչ ասոնց անուանը տեղ մը կը շնորհէ իր ստուար հատորին մէջ և ընդհակառակն լիւրի կը ծնփէ զայն շամխեցի, տփխիսեցի երգիչներու կամ Լազարեան և Գորպատեան վարժարանաց աշակերտներուն տաղերովը:

¹ Նորայրի Դիւան, «Նամակի» (սեւագրութիւններ), Թղթ. 4:0, 1:14, Վաւ. 4:7, էջ 31-34 (մեր էջակալմամբ):

² Տաղարանը կամ երգարանը 1868 թ. լոյս է տեսել Միքայէլ Միանսարեանցի հրատարակութեամբ:

Արդեօք տգիտութիւն է, մոռացութիւն, չէ նէ երկրորդ հատորի մը պատրաստութիւն: — Ո՞ւր դնենք նաև ուսերէնէ, գերմաներէնէ, զաղղիերէնէ և իտալերէնէ թարգմանուած երգերը, զորոնք խառնած է հայկական արտագրութեանց հետ Հայկական Քնարի տնօւածք: Ես կարծեմ թէ Ազգային Տաղարան մը պէտք չէ այսպէս խմբագրուած ըլլայ, կամ թէ այսպիսի խմբագրութիւն մը պէտք չէ Քնար Հայկական ըսուի. միով բանի՛ թօթափելու խիստ շատ բան կը տեսնեմ այդ գրքին մէջ, իսկ անհելու՛ խիստ քիչ բան:

Ընդունեցէք սիրոյ բարեկներս:

Հ. Յ. Թերզոնց

Գատը գիւղ, 1870 օգ. 8.

Առ ազնիւ Պ. Մանուէլ Էսայեան, Օրթագիւղ

1870 սեպտ. 2

«Ազնիւ Պարոն Մանուէլ Էսայեան,

Հաճութեամբ կարդացի Ձեր պատուական թուղթը, յորում քիչ շատ կը միաբանիք Քնար Հայկականի վրայ ըրած տեսութեանցս, և որովհետև կ'իմացնէք թէ նոր տաղարան մը հրատարակելու միտքն ունիք, ժամ է որ Ձեզի յայնեմ թէ նոյն փափաքը ես ալ ունեցած եմ և ինչուան այսօր ունիմ սրտիս մէջ: Տարիներէ ի վեր այս փափաքս գործադրելու նպատակաւ աշխատած եմ հաւաքել, դասակարգել և մեկնել՝ ձեռագիր տաղարաններու, օրագիրներու և ուրիշ բանասիրական հրատարակութեանց մէջ ցան և ցիր սփռուած երգերը, և տակաւին աշխատութեանս և ոչ իսկ կէսը հասած կը համարիմ ինքզինքս: Իմ վախճանս էր մեր ամէն երգիչներուն վրայ՝ սկսեալ այն ժամանակէն յորում ռամկական բարբոտը կը սկսի ի գիր արժանանալ, կենսագրական գիտելիք հեռախօսել, կռել տաղերուն մատենագրական կամ բանաստեղծական արժէքը, դիտողութիւններ ընել գործածուած լեզուայն կազմուածքին, ոճերուն և բառերուն վրայ, և ասանկով լուսաւորել մեր յետին դարուց դրականութեան միջին խորշերէն մէկը: Աշխատութեանս մէջ կը քաջալերիմ այն յուսովը թէ օգտակար ծառայութիւն մը կը մատուցանեմ համազգեացս որ միշտ ի սկզբանէ ի վեր սիրած են շղիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանս, և թէպէտ ձեռուրնս հասած երգոց մեծագոյն մասը հոգեւէն կամ տօնական տաղեր են կկեղեցականներէ գրուած, չեն պակսիր ուրիշ կողմանէ գողտրիկ և սթափական երգեր ալ, որոնց մէջի փափուկ բացառութիւնները, աշխոյժ նկարագիրները, առփոտ սրտի մը մեղմ կամ ուժգին զուրցուածքները չեմ փոխեր Անակրէոնի և կատուլլոսի գրածներուն հետ: Մանօթ է ամենուն որ հայկական դպրութիւնը իբրև պատմագիրք, ճարտասանք, քերթողք, առակախօսք, քերականք, ևայլն, մշակողներն, ծաղկեցընողներն կկեղեցականք եղած են. բայց շատ մեծ նշաւ գարմանքս երբ տեսայ որ ունեցած ամէն սիրերգակ և ծաղրերգակ բանաստեղծնիս ալ՝ կրօնից սրբամօրուս պաշտօնեայք են, երբեմն լոկ քահանայ կամ վարդապետ մը, երբեմն արքայիսկզպոս մը, երբեմն ինչուան նաև կաթողիկոս մը: Ասանկ են Յովհ. Թուրքուրանցի Սոսյ կաթողիկոսը ժն դարուն վերջերը, և Գրեգորիս կաթողիկոս Աթմամարայ ժՁ դարուն մէջ, որոնց ապուկ և դարձագարձ հառաչանքները, երևակայեալ կամ իրական սիրուհիներու հեշտալից նկարագիրները և բուռն խօսուածքը չեմ կրնար շատ յարմար դառնալ իրենց վիճակին: Կան սիրոյ ուրիշ երգեր ալ որոնց հեղինակները՝ հաւանօքէն քահանայական կարգէ ըլլալուն համար՝ չեն ուղած որ անուննին ծամժմուի աշխարհականաց բերնին մէջ, և ծածկեր են իրենք գիրենք, և ըստ իս՝ ամենէն աւելի զգածմամբ և խանդաղատանօք գրուածներն ասոնք են: — Ուրիշ գարմանալի բան մ'ալ որ շատ տեսակ խորհրդածութեանց առիթ եղաւ ինծի. ազգասիրական տաղի մը և ոչ իսկ հետքը գտած եմ:

Գալով ձեր գրած Արեակ Բ սղերգութեանը, սրմէ օրինակ մը տղնուութեամբ շնորհեցիք ինծի և կը խնդրէք որ ըրած քննադատութիւնս չզլանամ ձեզմէ, պէտք

է խոստովանիմ որ թատրերգական սճոյն վրայ մասնաւոր ուսում ըրած չըլլալով՝ չեմ կրնար ո՛ր և իցէ դատաստան մը ընել գրութեանդ վրայօք և կը ձգեմ զայն ձեռննս և աւելի կիրթ ճարտարներուն: Միայն մէկ քանի մանր և թեթև դիտողութիւններ կը համարձակիմ համառօտիւ նշանակել հոստեղ, գիտնալով որ հեղինակ մը միշտ կ'օգտուի նոյն խկ իրեն խճճող կրիտիաներուն շատ հեղ անխրաւ դատաստաններէն, ո՛ւր մնաց բարեկամի մը սիրալիր և մտերմական խորհուրդներէն:

Նախ և առաջ, լեզուս քիչ մը չափէն աւելի քերած մօքքած՝ որով տեղ տեղ քաշկոտած երեցաւ ինծի. պարզ խօսիչք՝ չեմ կրնար ընդունիլ որ այսպիսի լեզու մը, զոր կը բանեցնէ նաև Պ. Հիսարթեան իր նեռն վիպասանութեան մէջ, հասարակաց գրութեան լեզու մ'ըլլայ. որչափ որ ալ կը սիրեմ կը պաշտեմ մեր գրոց սքանչելի բարբառը, չեմ ուզեր որ աշխարհիկ լեզունիս ալ կորսնցնէ իր պարզութիւնը, որով և շնորհքը, և տեսակ մը լեզու ծնանի՝ որ հարազատ գրաբարին քով նուազի և նսեմանայ, սովորական աշխարհաբարին քովն ալ՝ գոյնզգոյն և խոստուտիկ լաթեր հողած մարդու մը պէս երևնայ, աչք չլացնող, բայց չէ թէ յագեցնող: Տեղ տեղ չկրցայ լաւ ըմբռնել խօսքերուն իմաստը, և թերևս դուք ալ այդ բանէն կոտկածելով՝ մէկ երկու անգամ գաղղիներէն բացատրութեամբ ուզեր էք յայտնի ընել մտքերնիդ: Մենք այնպիսի դարու մը մէջ կ'ապրինք որ ամէն բանէն առաջ պարզութիւն կը սիրեն. ինչո՞ւ գրաբար լեզուին խրթնութիւնները և դարտուղութիւնները ջանանք մտցնել հասարակ խօսակցութեան մէջ, որ անհասկանալի կամ դժուարասկանալի ըլլալէն զատ ուրիշ բան չշահիր:

Էջ 37 վասակայ երկրորդ խօսքին առջի տողին մէջ գրուած հոմանի բառին միտքը չեմ հասկընար. նոյնպէս էջ 22: Զրուանդխտոյ խօսքին մէջ փայլակեցանանցնեցուցանցիցես տասնավանկեան բառը որ տողին կէսէն աւելին բռնած է, չյարմարիր խիտ առ խիտ դրուած փողաքշական և փափկավանկ բառերուն քով և կը խնդրեմ որ ատոր տեղ ուրիշ բառ մը գտնաք: Էջ 43, «Չմեկնես ինչ են այն լեռներն զորոնք քթիդ չէիր տաներ» խօսքը Բիւզանդի գրոց մէջ այդ նշանակութիւնը չունի. «Ո՞վ են լեռինքն այնքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր» կը հասկցուի «Ո՞վ են այն լեռները զորոնք դուն գետին տակ կ'անցընէիր», վասն զի առաջ և ետքը կ'ըսէ նաև ընդ գետին ցանել. ա՛յլ է ունջի՛ քիթ, և ա՛յլ՝ ունջ՝ տակ, խոր, յորմէ և ընդվիկն: Էջ 8 Արշակայ խօսքին մէջ «Դո՞ւ այլ մի յառնես» և այլն, բացատրութիւնը նման է տաճիկ զուրցուածքին սե՞ն sk մի. անոր համար կարծեմ վերցնելու է այդ մին, և եթէ կ'ուզէք, կրնաք 1847 տարուան Բազմալիպիս 165 երեսը դրուած հմուտ յօդուածը աչքէ անցնել մի մասնիկին նկատմամբ: Երբեմն կուր կը գրէք և երբեմն կը, ինչո՞ւ միութիւն պահուած չէ. կարելի՞ չէ որ Եր Կրկին յարարեթականին տեղ միայն որ գործածել. — ամեն շամենայն» բառի նշանակութեամբ միշտ ետ վերելու է և եչով գրելը սեղադրութեան դէմ կը համարիմ, թէ պէտեւ Ալիշան վարդապետն ալ միշտ եչով կը գրէ. ձեռագրաց մէջ ամեն կը գրուի, և Արտ. Այալնեան ալ իր Քննակոն Բեռակոնութեան մէջ ամեն գրութիւնը կը դատապարտէ: Էջ 23 Ծոհանդխտոյ երկրորդ խօսքին մէջի սուսալից բառը ոսկերտուոյ համար կարծեմ չկրնար ըսուիլ, վասն զի այդ իմաստը անգիրն և քտմենելի գաղափար մը կը զարթուցանէ մարդուս մտքին մէջ, մինչդեռ սուսալից՝ բարակ հովէ մը ծածաննալ տերևոց մեղմիկ խօշիւնը կը յիշեցնէ:

Բ Հանդիսին Ե տեսլեան մէջ Խոստապետին երևնալն և աներևոյթ ըլլալը մէկ կ'ըլլայ. այդ անձը էական մաս մը չունի ողբերգութեան մէջ, և հանդիսատեսք անշուշտ կրնան իրենք իրենց հարցնել թէ ինչո՞ւ աննշան մարդ մը կը ներկայանայ տեսլարանին վրայ և ընդհանուր խողին հետ կապ չունեցող պարագայ մը ճոխանալով կը պտտմէ:

Ահաւասիկ ասոնք են, ազնիւ Պարոն, ողբերգութեանդ վրայ ըրած փոքրիկ դիտողութիւններս, որոնք ամենեւին չեն կրնար նուազեցնել մտքիս մէջ հայրենա-

ՀԵՏԵԻԵ՛ՆՔ ՆԱԽՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻՆ

Մարտիրոս Մինասեանը «Սիոն»-ի 1987 թ. Մայիս-Յունիս-Յուլիս ամիսներին միացեալ համարում (էջ 137-144) հրապարակել է մի գրախօսական, նուիրուած շարական թերթ»-ի 1986 թ. էջ 50-ում տպագրուած «Մի յողուածի առիթով» և «Պատասխան ընդդիմախօսիս» բանավիճային յողուածներին, որոնցից առաջինի հեղինակը տողերիս հեղինակն է, երկրորդինը՝ Բագրատ Ուլուբարեանը: Իմ յողուածում յայտնուում է, որ Բ. Ուլուբարեանը ճիշտ չի թարգմանել Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» երկրորդ գրքի ԿԳ գլխի վերնագիրը և սխալ է հասկացել այդ գլխում հանդիպող շերտերը ձեռամբ» բառակապակցութեան իմաստը: Բ. Ուլուբարեանը չի ընդունել իմ դիտողութիւններէից ո՛չ մէկը: Մարտիրոս Մինասեանը խոստանում է յայտնել իր անկողմնակալ կարծիքը բանավէճի մասին: «Ստորև արտայայտելու եմ անհողմնակալ կարծիքս» (137): Այդ կարծիքն այն է, որ Ուլուբարեանն իսկապէ՛ս սխալուել է և՛ որ Խորենացու երկու հատուածի վերծանութեան դէպքում էլ ինքը (Մինասեանը) համամիտ է Արգարեանին: «Համամիտ եմ (ընդգծել է Մինասեանը — Գ. Ա.) Ստ. Մալխասեանցին և Գ. Արգարեանին» (139), «Գ. Արգարեանին համակարծիք եմ (դարձեալ Մինասեանն է ընդգծողը — Գ. Ա.)» (143):

Բնականոն պայմաններում սպասելի է, որ գրախօսը քննադատեր սխալուողին

և պաշտպաներ սխալն ուղղողին: Սակայն Մարտիրոս Մինասեանը նախընտրել է հակառակ ճանապարհը. քննադատել է ինձ և պաշտպանել Ուլուբարեանին: Փաստն աւելի ակնյայտ դարձնելու համար նախ ծանօթանանք այն սխալին, որը պաշտպանել է Մինասեանը: Պաշտպանութեան առարկան է շերտէր ձեռամբ» բառակապակցութեանը վերաբերող անիրազեկութիւնը: Ուլուբարեանը չիմանալով, որ բառակապակցութիւնը համաշխարհային գրականութեան մէջ (Աստուածաշնչի երբայական բնագրում) գործածուել է Մովսէս Խորենացուց աւելի քան հազար տարի առաջ և նշանակում է շերտազուտ էր ձեռքով, կարծել է, թէ բառակապակցութեան առաջին գործածողը Խորենացին է, որը նկատի է ունեցել ոչ թէ նուազելը, այլ պարելը: Սոյն սխալը ես ուղղել եմ, վկայակոչելով Աստուածաշնչի երբայական բնագիրը և յունարէն ու հայերէն թարգմանութիւնները, որոնցում գրուած է. «Դաւիթ երգեր ձեռամբ իւրով» (նայն բովանդակութիւնն ունեն նաև երբայական և յունական Աստուածաշնչեբր): Ուլուբարեանն ինձ չհաւատալով, ստուգել է հայերէն Աստուածաշունչը և չի գտել իմ նշածը: Համոզուած լինելով, որ ինքը ճիշտ է ստուգել և՛ որ իմ նշած բառակապակցութիւնն Աստուածաշնչում չկայ, նա ինձ մեղադրել է Աստուածաշունչը կեղծելու և շարդար ու անխարդախ զէճ չմղելու մէջ: Այսպէսով գործ ունենք

տիրական խօսքերէդ, վազմուտն նկարագրութիւններէդ և ճարտար գրուագներէդ զգացած ախորժաւ: Չեղի համար ամենէն մեծ վարձք և ամենէն մեծ խրախոյս կը համարիմ այն ծափահարութիւնները զորոնք անշուշտ աննախանձարար Չեղի պիտի շնորհեն հանգիստականք, ցուցնելով թէ կը զգան, կը հասկնան Արշակայ և իր զօրավարին բերանը գրուած հայտարարիկ խօսքերուն զեղեցիկութիւնը և վսեմութիւնը:

Մողթելով Չեղ յաջողութիւն, մեամ աղնուութեանդ սիրոյ ողջունիւս:

(Մնացեալը խզողիլ)

Հ. Յ. Թերզոնց

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժննի համալսարան